# ԱՐԴՅՈ՞Ք ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

*Գրիգորյան Ն. Ա. (ԵՊՀ, Երևան, ՀՀ)*
*nvardgrigoryan@ysu.am*

Հոդվածն ուղղված է բացահայտել արժեքային կողմնորոշիչների դերը անձի՝ քաղաքացիական հարցերում ներգրավվելու պատրաստակամության գործում: Աշխատանքում քննարկվում են քաղաքացիական ներգրավվածություն պահանջող երեք իրավիճակներում արժեքների ազդեցությունը անձի ներգրավվածության պատրաստակամության վրա: Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ արժեքային կողմնորոշիչները, մասնավորապես՝ փորձին բաց լինելու, ինքնահաստատման և ինքնահաղթահարման արժեքները դրական նախապայման են ներգրավվածության համար, իսկ պահպանողական արժեքները բացասական նախապայման են քննարկվող իրավիճակներից երկուսի համար:

***Հանգուցային բառեր***՝ *քաղաքացիական ներգրավվածություն, քաղաքացիական մասնակցություն, արժեքներ, կողմնորոշիչներ, իշխանություն:*

Վերջին շրջանում Հայաստանում տեղի են ունենում գործընթացներ, որոնք ուղղված են երկրում ժողովրդավարության հաստատմանը: Ժողովրդավարությունը կախված է ինչպես երկրի քաղաքական, այնպես էլ քաղաքացիական հարցերում քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունից, և հենց այս պատճառով է, որ շատ կարևոր է, որպեսզի երիտասարդները հնարավորինս մասնակցեն երկրի քաղաքացիական հարցերին: Դեմոկրատական հասարակությանը մասնակցությունը կարող է մի քանի ձևեր ընդունել, երբ մարդիկ գործում են ոչ միայն իրենց սեփական շահի համար, այլև որպեսզի աջակցեն այլ մարդկանց, իրենց համայնքներին կամ հասարակությանը [3]:

Քաղաքացիական վարքը շատ հաճախ ուսումնասիրվում է անհատների և խմբերի քաղաքացիական մասնակցության և ներգրավվածության միջոցով: Կարելի է ասել, որ քաղաքացիական ներգրավվածությունը տեղակայված է քաղաքական և քաղաքացիական բևեռների արանքում և կարող է ներառել ինչպես քաղաքական գործողություններ, ինչպիսիք են բողոքի ակցիաները, այնպես էլ քաղաքացիական գործողություններ, օրինակ՝ կամավորական աշխատանքը: Ադլերը և Գոգինը քաղաքացիական ներգրավվածությունը սահմանել են որպես սովորական քաղաքացիների կողմից իրականացվող այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են հասարակության այնպիսի պայմանների փոփոխությանը, որոնք կարող են կարևոր լինել մյուսների

համար [1, էջ 236]: Դիլերի սահմանմամբ քաղաքացիական ներգրավվածությունը մարդու պատրաստակամությունն է քաղաքացիական պատասխանատվությունն իր վրա վերցնելու և գործողություններ կատարելու միայնակ կամ որևէ խմբի հետ [մեջբերված է ըստ 1, 238]: Քրոուլին քաղաքացիական ներգրավվածության մասին խոսելիս նշում է, որ այն ցույց է տալիս, թե ինչպես է ակտիվ քաղաքացին մասնակցում համայնքի կյանքին՝ դրա ապագան կերտել օգնելու նպատակով: Նա նշում է, որ քաղաքացիական ներգրավվածությունը պետք է սոցիալական փոփոխության բաղադրիչ պարունակի [մեջբերված է ըստ 1, էջ 239]: Մայքլ Դելա Քարփինին, ով քաղաքացիական ներգրավվածության վերաբերյալ մի շարք աշխատությունների հեղինակ է, նշում է, որ քաղաքացիական ներգրավվածությունը անհատական և խմբային գործողություններն են, որոնք ուղղված են բացահայտելու և լուծելու հասարակության խնդիրները: Այն կարող է ունենալ տարբեր ձևեր՝ սկսած կամավորությունից մինչև ընտրություններին մասնակցելը [մեջբերված է ըստ 1, էջ 239]:

Մի շարք հետազոտություններ անդրադարձել են Հայաստանում ներկայիս քաղաքացիական հասարակությանը: Ինչպես նշում է Իշխանյանը և այլոք, 2008 թվականից սկսած մի շարք քաղաքացիական նախաձեռնությունների փոքրաթիվ անդամներ ունեին և ուղղված էին որևէ կոնկրետ հարցի լուծմանը [2]: Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունների և ակտիվության վերաբերող տեղական և միջազգային հետազոտություններում առավել հաճախ քննարկվում են սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական բնույթի հարցեր: Հասկանալի է, որ քաղաքական և տնտեսական գործընթացները կարող են նպաստել կամ խոչընդոտել քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Սակայն քաղաքացիական հարցերում ներգրավվածությունն ու հետաքրքրությունը կարող են կախված լինել նաև անձնային գործոններից, ինչպիսիք են, օրինակ, արժեքային կողմնորոշիչները:

Արժեքները վարքը կողմնորոշող սկզբունքներ են: Դրանք հարաբերականորեն կայուն են, դժվարությամբ են փոփոխությունների ենթարկվում և կանխորոշում են մարդկանց վարքը: Ներկայումս ամենատարածված տեսություններից է Շալոմ Շվարցի կողմից առաջարկված արժեքային կողմնորոշիչների տեսությունը, ըստ որի արժեքները տարբերվում են իրենց դրդապատճառային հիմքով և ուղղված են անձի համար ցանկալի նպատակներին: Արժեքները որոշակիորեն պայմանավորում են անձի վարքը տարբեր իրավիճակներում: Շ. Շվարցի արժեքային կողմնորոշիչների տեսությունը մշակութային արժեքները դիտարկում է մի կողմից որպես իդեալներ, որոնց ձգտում է մարդը, իսկ մյուս կողմից՝ որպես նորմատիվ վարքի կողմնորոշիչներ, որոնց մարդը պետք է հետևի: Տեսությունն առաջարկում է տասը տարբեր դրդապատճառային հիմք ունեցող արժեքային կողմնորոշումներ [4]: Արժեքային կողմնորոշիչները ներկայացված են ստորև.

- Իշխանություն. մարդկանց և ռեսուրսների վրա իշխանության, սոցիալական ստատուսի, հեղինակության ցանկություն:
- Ձեռքբերում. ձգտումն է հասնելու անձնային հաջողության:
- Հեդոնիզմ. հաճույքի կամ զգայական բավարարվածության հասնելու ձգտումն է:
- Ստիմուլյացիա. ձգտումն է ոգևորիչ փորձառությունների, նորույթի, փոփոխության:
- Ինքնուրույնություն. վարքի և մտքի ինքնուրույնության, ստեղծագործականության ձգտում:
- Ունիվերսալիզմ. մարդկանց գնահատելու և հասկանալու, հանդուրժողականության, բնության մասին հոգածության ցանկություն:
- Կամեցողություն. հարազատների, մտերիմների, խմբի բարօրության պահպանման ցանկություն:
- Ավանդականություն. սովորույթների և ավանդույթների նկատմամբ հարգանք, դրանց պահպանում:
- Անվտանգություն. անվտանգության կայունության և ապահովության ձգտում [5, 6]:

Տասը արժեքները Շվարցի առաջարկած մոդելում ներկայացված են երկու երկբևեռ չափումներով: Ինքնահաստատման արժեքները (իշխանություն, ձեռքբերումներ), որոնք ուղղված են սեփական շահերը հետապնդելու խրախուսմանը և ընդունմանը, հակառակ են ինքնահաղթահարման արժեքներին (ունիվերսալիզմ, կամեցողություն), որոնք շեշտում են մյուսների բարօրության կարևորումը: Նոր փորձին բաց լինելու արժեքները (ինքնուրույնություն, ստիմուլյացիա), որոնք ուղղված են փոփոխությունների և նոր գաղափարների, փորձառության ընդունմանը, հակառակ են պահպանողական արժեքներին (անվտանգություն, ավանդականություն, կոնֆորմություն), որոնք ուղղված են վտանգներից խուսափելուն: Հեդոնիզմի արժեքը ներառում է նոր փորձին բաց լինելու և ինքնահաստատման արժեքները [6]:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել արժեքային կողմնորոշիչների դերը անձի՝ քաղաքացիական հարցերում ներգրավվելու պատրաստակամության գործում:

Հետազոտության վարկածն է՝ ենթադրվում է, որ ինքնահաղթահարման և նոր փորձին բաց լինելու արժեքները դրական նախապայման են հանդիսանում անձի՝ քաղաքացիական ներգրավվածության պատրաստակամության համար:

Հետազոտության համար ստեղծվել են երեք իրավիճակներ, որոնք վերաբերում են քաղաքացիական ներգրավվածություն պահանջող երեք ոլորտների՝ բնապահպանություն, ընտանիքի իրավունքների պաշտպանություն և սպառողների իրավունքների պաշտպանություն: Հարցվողներին առաջարկվել է կարդալ յուրաքանչյուր իրավիճակը և պատասխանել դրանց վերաբերող հարցերին: Հարցերն ուղղված են բացահայտելու, թե տվյալ իրավիճակն անձը որքանով է

իր և իր ապագայի համար կարևոր համարում, արդյոք կարծում է, որ մարդիկ պետք է զբաղվեն տվյալ հարցով և որքանով և ինչ ձևով է պատրաստ ներգրավվել հարցի լուծմանն ուղղված գործողություններին (տեղեկատվության տարածում, մասնակցություն ստորագրահավաքներին, ցույցերին, ցույցերի կազմակերպում, նամակագրություն տվյալ հարցով զբաղվող պաշտոնյաների հետ և այլն):

Այնուհետև հարցվողներին առաջարկվել է լրացնել Շ. Շվարցի կողմից ստեղծված Անձնային արժեքների հարցարանը (PVQ), որն ուղղված է դուրս բերելու տասը հիմնային արժեքային կողմնորոշիչները[1]:

Տվյալների վերլուծության համար կիրառվել է գծային ռեգրեսիայի մեթոդը՝ օգտվելով քանակական տվյալների վերլուծության համար նախատեսված SPSS համակարգչային փաթեթից: Հետազոտության ընտրանքը կազմել է 115 18-45 տարեկան երիտասարդ, որոնցից 40 տղամարդ և 75 կին[2]:

Ստորև քննարկենք հարցվողներին ներկայացված յուրաքանչյուր իրավիճակն առանձին:

Բնապահպանական խնդիրների դեպքում քաղաքացիական ներգրավվածության համար դրական նախապայմաններ են հանդիսանում իշխանության արժեքը (B=0.322), որը, ըստ Շ. Շվարցի տեղակայված է ինքնահաստատման արժեքների բևեռում, և բնապահպանական հարցի լուծման կարևորությունը տվյալ անձի համար (B=0.255): Այսինքն, այն մարդիկ, ովքեր ձգտում են սոցիալական ստատուս և հեղինակություն ունենալ, կարողանալ կառավարել մարդկանց և ռեսուրսները, ինչպես նաև համարում են, որ բնապահպանական հարցերի լուծումը կարևոր է հենց իրենց ապագայի համար, հնարավոր է, որ կանեն որոշակի գործողություններ, օր.՝ մասնակցություն ստորագրահավաքների, ցույցերի, նամակագրություն այս հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ, այս հարցի լուծման համար: Ենթադրում ենք, որ իշխանության արժեքը դրական նախապայման է բնապահպանական հարցերի լուծմանն ուղղված գործողություններին ներգրավվելու համար, քանի որ այս արժեքն իր մեջ ներառում է նաև բնական ռեսուրսները կառավարելու ձգտումը:

Ընտանիքի իրավունքների պաշտպանության իրավիճակի դեպքում տվյալ հարցով զբաղվելու պատրաստակամության համար դրական նախապայման են կամեցողությունը, ինքնուրույնությունը և տվյալ խնդրի կարևորությունը անձի ապագայի համար (B=0.246, B=0.187, B=0.440 համապատասխանաբար), իսկ որպես բացասական նախապայման դուրս է բերվել ավանդականության արժեքը (B=-0.406): Փաստորեն, այն մարդիկ, ովքեր կարևորում են այլ մարդկանց բարեկեցության ապահովումն ու պահպանումը, փոխօգնող սոցիալական հարաբերությունները, ինքնուրույն են իրենց գործողություններում և մտքերում,

[1] Հարցաթերթը տեղայնացվել է ԵՊՀ «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայի կողմից
[2] Հարցումներն անց են կացվել 2017թ. մայիս-նոյեմբեր ամիսների ընթացքում

ստեղծագործ և պրպտող են, ինչպես նաև այնքան էլ չեն հետևում տվյալ մշակույթում ընդունված մտածելակերպին ու ավանդույթներին, ընտանիքում անձի պաշտպանվածության հարցը համարում են իրենց ապագայի համար կարևոր, ավելի հավանական է, որ կկատարեն գործողություններ՝ ընտանեկան բռնության դեպքերը կանխելու նպատակով:

Սպառողների իրավունքների պաշտպանության դեպքում տվյալ խնդրով զբաղվելու պատրաստակամության համար դրական նախապայման են ունի-վերսալիզմի արժեքը և տվյալ խնդրի կարևորությունն անձի ապագայի համար (B=0.784, B=0.378 համապատասխանաբար), իսկ ավանդականության արժեքը (B=-0.346) բացասական ձևով է պայմանավորում տվյալ խնդրով զբաղվելու անձի պատրաստակամությունը: Այստեղ ևս, ինչպես և նախորդ իրավիճակի դեպքում, տվյալ մշակույթի ավանդույթներն ու սովորությունները պահպանելն ու դրանց հետևելը չի նպաստում, որպեսզի մարդիկ քայլեր ձեռնարկեն իրենց իրավունքները պաշտպանելու համար: Իսկ բոլոր մարդկանց բարեկեցության պահպանման կարևորության գիտակցումն ու կարևորումը, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության հարցը, որպես սեփական անձի ապագայի համար կարևոր հարց համարելը նպաստում է, որպեսզի անձը քայլեր ձեռնարկի այս խնդրի լուծման ուղղությամբ:

Այսպիսով, բոլոր երեք իրավիճակների դեպքում էլ արժեքային կողմնորոշիչները կարող են նախապայման հանդիսանալ քաղաքացիական հարցերում ներգրավվելու, որոշակի ակտիվություն ցուցաբերելու պատրաստակամության համար: Հետաքրքրական է, որ ընտանիքի իրավունքների և սպառողների իրավունքների պաշտպանության իրավիճակների համար ավանդականության արժեքը բացասական նախապայման է հանդիսանում ներգրավվելու պատրաստակամության հարցում: Ընտանեկան բռնության դեպքում սա, հավանաբար, կարելի է բացատրել մեր մշակույթում տարածված կարծիքով, որ ուրիշի ընտանեկան հարցերը վերաբերում են միայն այդ ընտանիքի անդամներին: Սպառողների իրավունքների պաշտպանության դեպքում, կրկին, այս արդյունքը կարելի է մեկնաբանել տարածված կարծրատիպով, որ որևէ ապրանք գնելիս պետք է հենց խանութում ստուգել դրա որակը, իսկ խանութից դուրս գալուց հետո այլևս ճիշտ չէ այն վերադարձնել կամ փոխանակելը:

Շ. Շվարցի առաջարկած մեծ արժեքային խմբերը դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ բոլոր երեք իրավիճակների դեպքում էլ ակտիվության համար դրական նախապայման են հանդիսանում ինքնահաղթահարման, նոր փորձին բաց լինելու և ինքնահաստատման արժեքները, իսկ պահպանողական արժեքները կամ որևէ կերպ չեն պայմանավորում մարդու ակտիվությունը կամ բացասականորեն են պայմանավորում:

Բացի այդ, պետք է նշել, որ բացի արժեքներից, շատ կարևոր է նաև այն, թե որքանով է տվյալ հարցը կարևոր անձի ապագայի համար: Հարցի կարևորությունը դրական նախապայման է բոլոր երեք իրավիճակներում որոշակի

ակտիվության պատրաստակամության համար, ինչը վկայում է այն մասին, որ անկախ այլ հանգամանքներից, մարդը պատրաստ է պայքարելու այն հարցի համար, որը կարևոր է համարում հենց իր համար:

Հետաքրքրական է, որ երեք իրավիճակների դեպքում էլ հարցվողների սեռը և տարիքը որևէ կերպ չեն պայմանավորում նրանց պատրաստակամությունը տվյալ հարցերի լուծման գործընթացում ներգրավվելու համար:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ արժեքային կողմնորոշիչները, մասնավորապես՝ փորձին բաց լինելու և ինքնահաղթահարման արժեքները իսկապես կարող են պայմանավորել անձի քաղաքացիական ներգրավվածության միտումը՝ նպաստելով, որպեսզի նա կատարի գործողություններ՝ լրատվության տարածում սոցիալական ցանցերի միջոցով, մասնակցություն ստորագրահավաքների, ցույցերի կամ դրանց կազմակերպում, տվյալ իրավիճակը շտկելու համար:

**Գրականություն**


1. **Adler R., Goggin J.** What Do We Mean By “Civic Engagement”? Journal of Transformative Education. Vol 3, Issue 3, 2005, pp. 236 – 253
2. **Ishkanian A.** Civil society, development and environmental activism in Armenia http://eprints.lse.ac.uk/54755/1/Ishkanian_Civil_Society_Development_Environmental_Activism_America_2013.pdf, 28.09.2018
3. **Kruglanski A.,** Higgins T Social psychology: handbook of basic principles 2nd ed., New York, 2007, 1010pp.
4. **Schwartz Sh.** A theory of cultural value orientations: Explication and applications. Comparative Sociology, 5, 2006, 137-182 pp.
5. **Schwartz Sh.** Value orientations: Measurement, antecedents and consequences across nations. In: R. Jowell, C. Roberts et al. (eds.). Measuring attitudes crossnationally: lessons from the ESS, London, Sage. 2007, 161-193 pp.
6. **Schwartz Sh.** An Overview of the Schwartz Theory of Basic Values, https://scholarworks.gvsu.edu/cgi/viewcontent.cgi?article=1116&context=orpc, 28.09.2018


## ОПРЕДЕЛЯЮТ ЛИ ЦЕННОСТНЫЕ ОРИЕНТАЦИИ ГОТОВНОСТЬ ЛИЧНОСТИ К ГРАЖДАНСКОЙ АКТИВНОСТИ?

*Григорян Н. А. (ЕГУ, Ереван, РА)*

Данная статья направлена на выявление взаимосвязи между ценностными ориентациями человека и готовностью участвовать в гражданской активности. В статье обсуждается влияние ценностей на готовность человека участвовать в трех ситуациях требующих гражданской активности. Анализ результатов опроса показывает, что ценностные ориентации, в частности, открытости для

нового опыта, самообеспеченности и сдерживания, являются положительными предпосылками для гражданской активности, а консервативные ценности являются негативной предпосылкой для двух обсуждаемых ситуаций.

***Ключевые слова:*** *гражданская активность, гражданское участие, ориентации, ценность, власть.*

## DO VALUE ORIENTATIONS PREDICT CIVIC ENGAGEMENT OF A PERSON?

*Grigoryan N. A. (YSU, Yerevan, RA)*

The article aims at investigating the relationship between value orientations and person's readiness to engage in civic activism. The article discusses the influence of value orientations on a person's readiness for engagement in three civic situations. Data analysis of the study show that value orientations, in particular openness to change, self-enhancement and self-transcendent values are positive predictors for civic engagement and the conservative values are negative predictors for two situations discussed in the article.

***Key words****: civic engagement, civic activity, orientations, values, power.*